

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2017
ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության (այսուհետ՝ նախարարություն) և նրա ստորաբաժանումների կողմից 2017 թվականին աշխատանքներ են տարվել համակարգի առջև դրված խնդիրների ու գործառույթների իրականացման ուղղությամբ: Շարունակական բնույթ են կրել Արցախի Հանրապետության օրենսդրության կատարելագործման, դատախիզական համակարգի և իրավակիրառական պրակտիկայի բարեփոխման ուղղությամբ տարվող աշխատանքները:

2017 թվականին նախարարության առջև դրված կարևորագույն խնդիրներից է հանդիսացել մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ պաշտպանության իրականացումը, բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը և համակարգի ստորաբաժանումների գործունեության բարելավումը:

Հաշվետու ժամանակահատվածում միջոցներ են ձեռնարկվել համակարգի սոցիալ-տնտեսական զարգացման, գործունեության բարեփոխման և նյութատեխնիկական բազայի ընդլայնման ուղղությամբ:

Գործուն և համակարգային բնույթ է կրել համակարգի ստորաբաժանումների գործունեության նկատմամբ տարվող հսկողությունը, դրա կազմակերպչական և մեթոդական կառավարումը, պրակտիկ օգնության ցուցաբերումն ու ստուգումների իրականացումը, վերահսկված թերությունների և բացթողումների քննարկումն ու դրանց վերացման համար համապատասխան միջոցների կիրառումը:

2017 թվականի հունվարի 17-ին հրավիրված Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի նիստում նախարարը, որպես Սահմանադրության նախագիծը ներկայացնելու համար ԼՂՀ նախագահի ներկայացուցիչ, հանդես է եկել եզրափակիչ ելույթով՝ ներկայացնելով այն հիմնական փոփոխությունները, որոնք տեղ են գտել Սահմանադրության նախագծում ԱԺ խմբակցությունների և պատգամավորների առաջարկություններով:

2017 թվականի հունվարի 26-ին տեղի է ունեցել մամլո ասուլիս՝ 2016 թվականի ԼՂՀ արդարադատության նախարարության աշխատանքային գործունեության վերաբերյալ, որի ընթացքում նախարարը պարզաբանել է լրագրողների կողմից հնչեցված բազմաթիվ հարցեր:

2017 թվականի փետրվար ամսում նախարարը Սահմանադրական բարեփոխումների վերաբերյալ անց է կացրել մի շարք հարցազրույցներ տարբեր լրատվական ընկերությունների լրագրողների հետ:

2017 թվականի փետրվար ամսում նախարարը Արցախի Հանրապետության Սահմանադրության նախագծի պարզաբանման նպատակով հանդիպել է Արցախի Հանրապետության ռուսական համայնքի անդամների հետ:

2017 թվականին նախարարն այցելել է Հաղրութի, Մարտունու և Մարտակերտի շրջաններ, որտեղ հանդիպել է նախարարության աշխատակազմի տարածքային ստորաբաժանումների ղեկավարների հետ, ծանոթացել առկա խնդիրներին ու տվել համապատասխան ցուցումներ:

2017 թվականի նախարարը մասնակցել է նաև ԱՀ Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդի խորհրդակցություններին:

Հաշվետու տարում նախարարը մասնակցել է ԱԺ լիագումար և ԱԺ հանձնաժողովի նիստերին ներկայացնելով Սահմանադրության պահանջներից բխող և մի շարք այլ օրենքների նախագծերի փաթեթներ, տվել պարզաբանումներ պատգամավորների կողմից հնչեցված հարցերի շուրջ: Վերոնշյալ բոլոր օրինագծերն արժանացել են խորհրդարանի հավանությանը:

2017 թվականի հուլիս ամսում նախարարն Արցախի հանրային հեռուստատեսությանը տված հարցազրույցներում ներկայացրել է Արցախում օրենսդրական դաշտի վերջին փոփոխությունները, անդրադարձել Սահմանադրության անցումային դրույթների մեկնաբանությանը, ինչպես նաև նախագահի ընտրության և Սահմանադրությունից բխող հետընտրական զարգացումների մասին:

2017 թվականի հուլիսի 12-ին նախարարն ընդունել է «Լույս» հիմնադրամի՝ Արցախում գտնվող մի խումբ ուսանողների և քննարկել հիմնադրամի աջակցությամբ իրականացվող ծրագրերը, պատասխանել նրանց հետաքրքրող հարցերին՝ ԱՀ Սահմանադրության ընդունման անհրաժեշտության, ինչպես նաև ընթացիկ օրենսդրական գործընթացների վերաբերյալ:

2017 թվականի հուլիսի 18-ին նախարարն՝ ՀՀ «Առավոտ» էլեկտրոնային պարբերականի հետ տեղի ունեցած հարցազրույցում ներկայացրել է Արցախում առաջիկայում կայանալիք նախագահի ընտրության և Սահմանադրությունից բխող հետընտրական զարգացումների ընթացակարգերը:

2017 թվականի օգոստոսի 30-ին նախարարը մասնակցել է Արցախում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի առաքելության կողմից կազմակերպված «Անհայտ կորածների միջազգային օրվան» նվիրված ցուցահանդեսին:

2017 թվականի հոկտեմբերի 16-ին նախարարը ԱՀ Նախագահի նստավայրում մասնակցել է Նախագահի 2017-2020թթ. ծրագրին նվիրված ընդլայնված խորհրդակցությանը:

2017 դեկտեմբերի 25-ին նախարարը հարցազրույց է տվել «Ազատ Արցախ» պաշտոնաթերթին:

2017 դեկտեմբերի 27-ին նախարարը ներկա է գտնվել ԱՀ արդարադատության նախարարության «ԼՂՀ պետական արխիվ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի աշխատանքների ամփոփմանը:

2017 դեկտեմբերի 29-ին նախարարը այցելել է Արցախի Հանրապետության պետական սահմանին մարտական հերթապահություն իրականացնող ՊԲ N զորամաս, շնորհավորել զինծառայողներին գալիք տոների կապակցությամբ:

2017 թվականին նախարարի կողմից իրականացվել է 134 քաղաքացիների ընդունելություն:

2017 թվականին մշակվել և ԱՀ պետական նախարարի աշխատակազմ է ներկայացվել նախարարության մասով ԱՀ Նախագահի 2017-2020 թթ. ծրագիրը:

2017 թվականին մշակվել է նաև ԱՀ նախագահի 2017-2020 թթ. ծրագրից բխող նախարարության 2017-2020 թթ. միջոցառումների կատարման ժամանակացույցը:

2017 թվականի ընթացքում արդարադատության նախարարությունը նաև ակտիվ համագործակցել էն ԱՀ և ՀՀ տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվամիջոցների, ինչպես նաև Արցախի հանրային հեռուստատեսության հետ՝ ներկայացնելով օրենսդրական դաշտում ընթացող գործընթացների և նախարարությանը վերապահված ոլորտներում նորությունների և արդյունքների մասին:

Նախարարության համակարգում ընդգրկված ստորաբաժանումների գործունեությունն ըստ ոլորտների ունի հետևյալ պատկերը.

1. Նախարարությունում ստացված փաստաթղթերի շրջանառության, քաղաքացիների դիմումների և բողոքների քննարկման ոլորտ

Արդյունքները: 2017 թվականին նախարարությունում մուտքագրվել են **5885 (5119)** նամակ-գրություններ, որոնցից **3905-ը (3498)** պետական մարմինների և նախարարության տարածքային ստորաբաժանումների, **1938-ը (1577)** աշխատակազմի աշխատակիցների (կազմակերպչական բնույթի), կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի, իսկ **42-ը (46)** քաղաքացիների կողմից, Առօրյա բնույթ են կրել քաղաքացիների ընդունելությունները, նրանց իրավական օգնություն ցուցաբերելու աշխատանքները:

Աշխատանքներ են տարվել բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց և նրանց առաջին հերթի ժառանգներին պարզաբանումներ տալու, ստացված դիմումները հաշվառելու և ընթացքավորելու, համապատասխան կարգավիճակ ստացած անձանց վկայականներ տրամադրելու ուղղությամբ: Նախարարությունում հրավիրվել և անց է կացվել բռնադատվածի կարգավիճակ ունեցող անձանց կամ նրանց առաջին հերթի ժառանգներին վկայականներ տվող հանձնաժողովի 1(2) նիստ, որի արդյունքում **2 (4)** քաղաքացիների շնորհիվ է բռնադատվածի կարգավիճակ և տրվել են համապատասխան վկայականներ: Բացի այդ նախարարությունում հրավիրվել և անց է կացվել նաև որդեգրման հարցերով հանրապետական հանձնաժողովի 1 (2) նիստ: Նիստում քննարկվել է ԼՂՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 26-ի N 235-Ն որոշման պահանջներին համապատասխան՝ օտարերկրյա քաղաքացու կողմից ԼՂՀ քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրելու նպատակով, լիազոր մարմնի կողմից կենտրոնացված հաշվառման կանգնելու դիմումը: Քննարկման արդյունքում հանրապետական հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

2. Կադրային քաղաքականության և անձնակազմի կառավարման ոլորտ

Արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում աշխատանք է տարվել կադրերի ընտրության, նրանց ստաժավորման, ատեստավորման և որակավորման բարձրացման գործընթացը կազմակերպելու ուղղությամբ:

2017 թվականին «Ազատ Արցախ» թերթին է առաքվել ԱՀ ԱՆ ԴԱՀԿԱԾ Ստեփանակերտ-Ասկերան տարածքային բաժնի հարկադիր կատարողի, աշխատակազմի իրավական տեղեկատվական համակարգի բաժնի առաջատար և առաջին կարգի մասնագետների, իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնները զբաղեցնելու վերաբերյալ հայտարարությունները, միջոցներ են ձեռնարկվել դիմած քաղաքացիների կողմից անհրաժեշտ փաստաթղթերի լրացումն ապահովելու, ներկայացրած փաստաթղթերը հավաքագրելու և համապատասխան տեղեկատվություն տրամադրելու ուղղությամբ՝ դրանց վերաբերյալ համապատասխան գրություններ ուղարկելով ԱՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ:

2017 թվականի դեկտեմբերի 22-ին արդարադատության նախարարությունում, համաձայն <<Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին>> ԼՂՀ օրենքի, անց է կացվել ԴԱՀԿԱ ծառայության թվով **13** հարկադիր կատարողների ատեստացիա:

2. Թղթակցությունը Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի հետ.

Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի համաձայնեցմանն են ներկայացվել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության քաղաքացիական ծառայության պաշտոնների նոր անվանացանկը և համապատասխան պաշտոնների անձնագրերը:

Կազմվել են նոր նշանակված և գրանցամատյանում ընդգրկված քաղաքացիական ծառայողների հաշվառման տվյալների փոփոխությունների մասին (Ձև7) և քաղաքացիական ծառայության պաշտոններից ազատված քաղաքացիական ծառայողների մասին տեղեկությունները (Ձև 9):

ԱՀ ՔԾԽ կողմից ուղարկված ժամանակացույցի համաձայն տրամադրվել են ԱՀ ԱՆ աշխատակազմի ատեստավորման ենթակա գլխավոր պաշտոններ զբաղեցնող աշխատակիցների վերաբերյալ պահանջվող տեղեկությունները, ինչպես նաև 2018թ. ատեստավորման և վերապատրաստման ենթակա աշխատակազմի քաղաքացիական ծառայողների վերաբերյալ տեղեկություններն ու տարեկան հայտը:

Նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել աշխատակազմի իրավական տեղեկատվական համակարգի բաժնի առաջատար մասնագետի թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթի անցկացման ուղղությամբ, մասնավորապես:

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել 2017 թվականի հուլիսի 3-ից մինչև հուլիսի 15-ը ներառյալ Արցախի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից <<Մեսրոպ Մաշտոց>> համալսարանում կազմակերպված քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներին Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակիցների մասնակցությունն ապահովելու ուղղությամբ:

ԱՀ ՔԾԽ են ուղարկվել մի շարք տարաբնույթ գրագրություններ:

3. Իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման ոլորտ

Արդյունքները: Հաշվետու ժամանակահատվածում պետական իրավական փորձաքննության են ենթարկվել Արցախի Հանրապետության օրենսդրական ակտերի թվով **397 (325)** նախագծեր, որոնցից **62 (35)**-ը՝ Արցախի Հանրապետության օրենքների, **1**-ը Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրի, **333 (273)**-ը՝ Արցախի Հանրապետության կառավարության որոշումների և **1 (17)**-ը՝ Արցախի Հանրապետության վարչապետի որոշման, որոնց վերաբերյալ տրվել են բանավոր և գրավոր առաջարկություններ, որոնք մեծամասամբ ընդունվել են:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության քննարկմանն են ներկայացվել

Արցախի Հանրապետության դատական օրենսգրքի,

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Դատական ծառայության մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթները:

Արցախի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդին է ներկայացվել

«Հաշվեքննիչ պալատի մասին»,

«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,

«Գանձապետական համակարգի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,

«Հանրային ծառայության մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Աուդիտորական գործունեության մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»,

«Դատախազության մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Լեոնային Ղարաբաղի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,

«Տեղական ինքնակառավարման մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»,

«Կուսակցությունների մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին»,

«Պետական պաշտոններ զբաղեցրած անձանց սոցիալական երաշխիքների մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»

Արցախի Հանրապետության օրենքների **նախագծերի փաթեթները:**

«Իրավական ակտերի մասին» Արցախի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,

«Հանրային ծառայությունների մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին»,

«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին»,

«Լեոնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Դրոշի մասին» Լեոնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»,

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրհներգի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին»

«Սահմանադրական դատավարության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

«Դատախազության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերը:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել է «Ազգային ժողովի կանոնակարգ» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը: Նախագծի ուսումնասիրության արդյունքում ինչպես սահմանադրական բարեփոխումների համակարգման խորհրդին, այնպես էլ նախագիծը մշակող Ազգային ժողովի աշխատանքային խմբին են ներկայացվել ավելի քան **80** առաջարկություններ, որոնք հիմնականում ընդունվել են:

Շահագրգիռ մարմինների հետ համաձայնեցման նպատակով օրենսդրությամբ սահմանված կարգով շրջանառության մեջ է դրվել «Պարտապանի միակ բնակարանի իրացման համար նվազագույն գումար սահմանելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Հաշվետու ժամանակաշրջանում մշակվել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարի հաստատմանն ու պետական գրանցմանն են ներկայացվել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող արխիվագիտական ծառայությունների դիմաց վճարումների իրականացման կարգը և գնացուցակը հաստատելու մասին» N 13-Ն և «Լեռնային Ղարաբաղի արդարադատության նախարարի 2009 թվականի փետրվարի 25-ի թիվ 11-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» N100-Ն գերատեսչական նորմատիվ իրավական ակտերը:

Հաշվետու ժամանակաշրջանում պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման են ենթարկվել թվով **80** գերատեսչական նորմատիվ իրավական ակտեր:

Պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման են ենթարկվել տեղական ինքնակառավարման մարմինների թվով **231 (242)** նորմատիվ իրավական ակտեր:

Օրենքով սահմանված կարգով հաշվառվել, համակարգվել և պահպանվել են 2017 թվականին ստացված ԱՀ իրավական ակտերի պաշտոնական օրինակները:

Ուսումնասիրվել են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Ռ. Բսրայեյանի, Է. Աղաբեկյանի, Լ. Հովհաննիսյանի, Վ. Սաֆարյանի և Ա. Առստամյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Զինապարտության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և Ա. Գրիգորյանի և Ա. Օհանջանյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված՝ «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնց արդյունքում ներկայացվել են համապատասխան առաջարկություններ: Ուսումնասիրվել է նաև Ազգային ժողովի պատգամավորներ Ա. Ղուլյանի, Հ. Զիվանյանի, Գ. Պետրոսյանի և Դ. Մելքումյանի կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Արցախի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորների գործունեության երաշխիքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի նախագիծը:

4. Իրավական տեղեկատվական համակարգի ոլորտ

Արդյունքները: 2017 թվականին «Arlexis» ծրագրում իրականացվել են՝

2017 թվականին աշխատակազմի իրավական տեղեկատվական համակարգի բաժինը **Arlexis.am** անվճար իրավական տեղեկատվական համակարգում իրականացրել է 2014-2017 թվականներին Արցախի Հանրապետությունում ընդունված թվով **1600** օրենսդրական, դատական (Սահմանադրություն, օրենքներ, Ազգային ժողովի որոշումներ, Նախագահի հրամանագրեր և կարգադրություններ, Կառավարության, Վարչապետի, Արդարադատության խորհրդի, Գերագույն դատարանի, Գերագույն դատարանի նախագահի և դատարանների նախագահների խորհրդի որոշումներ) և 2003-2007 թվականներին ընդունված թվով **740** գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի ներմուծման, սրբագրման, պարամետրերի, փոփոխվողների ճշգրտման, ինկորպորացիայի ներմուծման, ինկորպորացիայի հաստատման, հաստատման և վերջնական հաստատման աշխատանքները:

2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ անվճար իրավական տեղեկատվական համակարգը իր մեջ ներառում է թվով **11733** փաստաթուղթ, բացի այդ www.arlexis.am կայքի հաճախելիության ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ arlexis անվճար իրավական տեղեկատվական համակարգի կայքը 2017 թվականի ընթացքում ունեցել է **39.908** հաճախորդ և **159.505** դիտումներ, որը վկայում է համակարգի նկատմամբ քաղաքացիների հետաքրքրվածության բարձր մակարդակի և համակարգի կարևորության մասին:

Համակարգում պարբերաբար կատարվում է նոր ընդունված նորմատիվ իրավական ակտերի մուտքագրում և ինկորպորացիա: Այժմ աշխատանքներ են տարվում 2008-2017 թվականներին ընդունված գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի և նոր Սահմանադրությունից բխող օրենսդրական դաշտի ներմուծման ուղղությամբ:

Բացի այդ, պարբերաբար թարմացվել է նախարարության՝ www.minjustnkr.am կայքը: Քաղաքացիներին ու հանրությանը նախարարության և նախարարության ստորաբաժանումների գործունեության մասին ավելի արդյունավետ իրազեկելու նպատակով <<Ֆեյսբուք>> սոցիալական ցանցում ստեղծվել է նախարարության էջ:

5. Իրավական ակտերի պաշտոնական հրատարակման ոլորտ

Արդյունքները: 2017 թվականի ընթացքում իրավական ակտերի պաշտոնական հրատարակման բաժնի կողմից կազմակերպվել են «ԼՂՀ պաշտոնական տեղեկագրի», «ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի տեղեկագրի» ու «Քաղաքային և գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածուի» պաշտոնական պարբերականների հրատարակման աշխատանքներ:

Կազմակերպվել ենք տեղեկագրերի հրատարակման համար ներկայացվող նյութերի ամփոփման, համակարգման և տեքստերի ուղղագրության ստուգման աշխատանքները:

Յուրաքանչյուր ամիս հրատարակվել է երկու կամ երեք պարբերական:

2017 թվականի ընթացքում հրատարակվել են «ԼՂՀ պաշտոնական տեղեկագրի» **22(313)**, **23(314)** - 2016 թվականի և **23 (21)**, «ԼՂՀ գերատեսչական նորմատիվ ակտերի

տեղեկագրի» 10 (12) ու «Քաղաքային և գյուղական համայնքների նորմատիվ իրավական ակտերի ժողովածուի» 8(8) համարներ:

Տեղեկագրերում գետեղվել են ԱՀ ազգային ժողովի կողմից ընդունված 51 (եղել է 53) օրենք, ԱՀ Նախագահի 11 (7) հրամանագիր և 4 (3) կարգադրություն, ԱՀ կառավարության 234 (241) որոշում, ԼՂՀ վերահսկիչ պալատի 2016թ. տարեկան հաշվետվությունը, ԱՀ արդարադատության խորհրդի 1(1) որոշում, ԱՀ դատարանների նախագահների խորհրդի 6 (1) և ԱՀ գերագույն դատարանի 29 (42) որոշումներ, 76 (104) գերատեսչական նորմատիվ ակտեր և նախարարությունների ու գերատեսչությունների կողմից տրված լիցենզիաների, լիցենզիաների գործողության դադարեցման և կասեցման մասին տեղեկություններ:

2017 թվականի օգոստոս ամսում ԱՀ արդարադատության նախարարության արտաբյուջետային միջոցների հաշվին հրատարակվել են թվով 1000 օրինակ Արցախի Հանրապետության Սահմանադրության գրքային տարբերակներ, որոնք գրախանութների միջոցով անվճար բաժանվել են Ստեփանակերտի և շրջկենտրոնների քաղաքացիներին:

Հատուկ թողարկմամբ, պաշտոնական հրատարակման է ներկայացվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքը և Արցախի Հանրապետության դատական օրենսգիրքը:

Նախարարության կողմից ազատ կարգով իրացվել է 280 (324) տեղեկագիր, որից ստացված 502.000 (678.522) դրամ գումարը փոխանցվել է պետական բյուջե:

6. ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության գործունեության կազմակերպում

Արդյունքները: 2017 թվականին ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կողմից աշխատանքներ են տարվել գործակալության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման ուղղությամբ: Առօրյա մեթոդական և կազմակերպչական ղեկավարման է ենթարկվել Արցախի Հանրապետության նոտարական գրասենյակների և ՔԿԱԳ տարածքային բաժինների ընթացիկ գործունեությունը: Կատարվել է ստացված դատական ակտերի ուսումնասիրություն և հաշվառում:

Հարկ է նշել, որ նշված ժամանակաշրջանում ԱՀ կառավարության աջակցությամբ կապիտալ վերանորոգվել և ամբողջությամբ կահավորվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման Ստեփանակերտի տարածքային բաժնի մասնաշենքը:

Հաշվետու ժամանակաշրջանում ստուգվել է Ստեփանակերտ նոտարական տարածքի թիվ 2 նոտարական գրասենյակի կողմից 2016թ. և Ասկերան նոտարական տարածքի նոտարական գրասենյակի կողմից 2016թ. և 2017թ. առաջին կիսամյակի լիազորագրերի կազմման օրինականությունը: Ինչպես նաև անց է կացվել նոտարների թեկնածուների որակավորման ստուգման քննություն, որի արդյունքում 2-րդ փուլի անցումային շեմը 2 դիմորդներն էլ հաղթահարել:

Բացի այդ, գործակալության 2 աշխատող գործուղվել են ՀՀ ք. Ծաղկաձոր՝ մասնակցելու ՀՀ Նոտարական պալատի և Միջազգային իրավական համագործակցության Գերմանական հիմնադրամի /IRZ/ համատեղ նախաձեռնությամբ կազմակերպված սեմինարին:

2017 թվականին արտաբյուջե է մտցվել 11.761.100 (9.797.900) դրամ, որից՝

ա. նոտարական գրասենյակների կողմից - **9.152.500** դրամ,
բ. ՔԿԱԳ տարածքային բաժինների և գործակալության
կենտրոնական մարմնի կողմից - **2.608.600** դրամ:

Գործակալության գործունեությունն ըստ առանձին-առանձին ոլորտների ունի հետևյալ պատկերը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման կազմակերպում.

Արդյունքները: Հաշվետու ժամանակաշրջանում առօրյա մեթոդական և կազմակերպչական ղեկավարման է ենթարկվել ՔԿԱԳ տարածքային բաժինների գործունեությունը: Ընթացքավորվել է թվով **273 (237)** հարցում՝ քաղաքացիական կացության ակտային գրանցումների պատճեններ, վկայականների կրկնօրինակներ և ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին տեղեկանքներ ստանալու մասին: Նշված հարցումներից **27-ը** կատարվել է անմիջական ԱՀ արդարադատության նախարարության միջոցով, իսկ **246-ը՝** ՀՀ արդարադատության նախարարության և ԱՀ արտաքին գործերի նախարարության միջոցով: Գործակալության կողմից այլ պետություններ են ուղարկվել **17** հարցում: Նշված **17** հարցումներից **14-ը** ուղարկվել են ՌԴ, **1-ը՝** Ուզբեկստանի Հանրապետություն, **1-ը՝** Ղազախստանի Հանրապետություն և **1-ը՝** Ղրիմի Հանրապետություն: Բացի այդ, տրվել է թվով **220 (224)** ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանք, որոնց դիմաց գանձվել է **199.000 (197.000)** դրամ պետական տուրք: Փաստորեն, հաշվետու ժամանակաշրջանում տրված ընտանեկան կարգավիճակի մասին տեղեկանքների թիվը 2016 թվականի համեմատությամբ նվազել է **4-ով**, իսկ պետական տուրքն աճել է **2.000** դրամով: Նշված տեղեկանքներից **115-ը** տրվել են տղամարդկանց (**125**), իսկ **105** ը՝ կանանց (**99**):

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության կենտրոնական մարմինը ընթացքավորել է Արցախի Հանրապետության քաղաքացի հանդիսացող երեխա որդեգրել ցանկացող ՀՀ քաղաքացիների **1** դիմում:

ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից ներկայացրած ծննդյան, ամուսնության ակտերի գրանցման վերականգնման, անվան, հայրանվան, ազգանվան փոխման և քաղաքացիական կացության ակտերի գրանցման ուղղման, փոփոխման և լրացման վերաբերյալ նյութերը մանրակրկիտ ուսումնասիրվել, ստուգման են ենթարկվել, որի արդյունքում հաստատվել են **177 (132)** եզրակացություններ: Փաստորեն, հաստատված եզրակացությունների թիվը համեմատած 2016թ. հետ աճել է **45-ով**: Նշված եզրակացություններից **28-ը (10)** վերաբերվում է ակտերի գրանցման վերականգնմանը, **44-ը՝ (53)** անվան, հայրանվան, ազգանվան փոխմանը և **105-ը՝ (69)** ակտային գրանցումների ուղղմանը, փոփոխմանը և լրացմանը:

Գործակալության կենտրոնական մարմնի կողմից հաշվետու ժամանակաշրջանում մերժվել է ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից ներկայացրած ակտային գրանցումների մեջ ուղղումներ կատարելու վերաբերյալ թվով **2** եզրակացություն, որից **1-ը** ներկայացվել է ՔԿԱԳ Ստեփանակերտի և **1-ը՝** ՔԿԱԳ Հաղորթի տարածքային բաժինների կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում ուսումնասիրվել և համապատասխան ՔԿԱԳ տարածքային բաժիններ են ուղարկվել օտարերկրյա քաղաքացիների ամուսնության գրանցման թույլտվության թվով **23 (13)** նյութ, որոնցից՝

ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժին	15(5)
Ասկերանի	0(1)

Մարտակերտի	4(1)
Հաղորթի	0(1)
Մարտունու	1(1)
Շահումյանի	2(0)
Քաջաթաղի	0(4)

Ամուսնացողներից 9-ը հանդիսանում են ՌԴ, 7-ը՝ Ուկրաինայի Հանրապետության, 2-ը՝ ԱՄՆ, 1-ը՝ Մոլդովայի Հանրապետության, 1-ը՝ Շվեդիայի Թագավորության, 1-ը՝ Ղազախստանի Հանրապետության, 1-ը՝ Գերմանիայի Դաշնային Հանրապետության և 23-ը՝ Արցախի Հանրապետության քաղաքացիներ:

Գրանցվել է նաև քաղաքացիություն չունեցող 1 անձի ամուսնություն:

Գործակալության կողմից յուրաքանչյուր ամիս ստուգման է ենթարկվել քաղաքացիական կացության ակտային գրանցումների լրացման օրինականությունն ու հիմնավորվածությունը:

ՔԿԱԳ տարածքային բաժինների աշխատանքային գործունեության մասին վիճակագրական տվյալների վերլուծությամբ պարզվել է, որ վերջիններիս կողմից 2017թ. կատարվել են 4.990 (5.022) քաղաքացիական կացության ակտային գրանցումներ: Փաստորեն, կազմված ակտային գրանցումների քանակը համեմատած 2016թ. հետ նվազել է 32-ով: Բացի այդ, ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից կատարվել է թվով 101 ուղղում (76), տրվել է 1.202 (852) կրկնօրինակ վկայական և 895 (668) տեղեկանք՝ ակտային գրանցումների առկայության կամ բացակայության մասին, ինչպես նաև վկայականի կրկնօրինակ ստանալու համար այլ ՔԿԱԳ տարածքային բաժիններ են ուղարկվել թվով 26 (28) ծանուցում:

Բացի այդ, ՔԿԱԳ բաժինների կողմից քաղաքացիներին տրամադրվել են այլ վայրերից ստացված 21 (21) տեղեկանքներ և վկայականների կրկնօրինակներ:

Փաստորեն, ընդհանուր առմամբ ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից կատարվել է 7.235 (6.667) գործողություն: Գործողությունների քանակը համեմատած 2016թ. հետ աճել է 568-ով:

Նշված գործողությունների դիմաց գանձվել է 8.307.000 դրամ պետական տուրք (6.911.000 դրամ): Փաստորեն, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ գանձված պետական տուրքը աճել է 1.396.000 դրամով:

Քաղաքացիական կացության ակտային գրանցումների ընդհանուր քանակից 2.351-ը վերաբերում է ծննդյան ակտային գրանցումներին (2.478), որից՝

առաջնեկ – 779 (838),

երկրորդ երեխա – 737 (793),

երրորդ երեխա – 437 (446),

չորրորդ երեխա - 229 (219),

հինգերորդ երեխա – 95 (102),

վեցերորդ երեխա – 35 (33),

յոթերորդ երեխա - 28 (25),

ութերորդ և բարձր – 11 (22)

Նշված ծնունդներից 2.336-ը՝ (2.474) կենդանածին են:

Վիճակագրական տվյալների վերլուծությունից երևում է, որ ծննդաբերող մայրերի միջին տարիքը կազմում է 27.1 տարին:

Կատարվել են 28 (26) գույգ երկվորյակ երեխաների ծննդյան ակտային գրանցում:

Ընդհանուր առմամբ 2016թ. համեմատությամբ 2017թ. ծննդյան ակտային գրանցումների թիվը նվազել է 127-ով:

Ծննդյան ակտային գրանցումների ուսումնասիրությունից երևում է, որ ամենատարածված տղա երեխաների անուններն են Մարկ, Ալեքս, Գոռ, Նարեկ անունները, իսկ աղջիկ երեխաների համար՝ Անգելինա, Սոֆիա, Վիկտորիա, Մարիամ անունները:

2017թ. կազմվել են **1.238 (1.222)** մահվան ակտային գրանցումներ, որից՝
մինչև **1** տարեկան երեխաները – **12 (27)**
մինչև **5** տարեկան երեխաները – **5 (1)**

Մահացած քաղաքացիներից **617**-ը հանդիսանում են իգական, իսկ **621**-ը՝ արական սեռի ներկայացուցիչներ: 2017թ. կատարված մահվան ակտային գրանցումների թիվը 2016թ. համեմատությամբ աճել է **16**-ով:

2017թ. կատարվել են **961 (934)** ամուսնության ակտային գրանցումներ, որից ամուսնացող տղամարդկանց թիվը կազմում է՝

16-17 տարեկան – **1**

18-22 տարեկան – **111 (102)**

23-27 տարեկան – **442 (472)**

28-32 տարեկան – **245 (219)**

33-ը և բարձր – **163 (141)**

իսկ ամուսնացող կանանց թիվը կազմում է՝

16-17 տարեկան – **19 (17)**

18-22 տարեկան – **437 (451)**

23-27 տարեկան – **310 (271)**

28-32 տարեկան – **102 (103)**

33-ը և բարձր – **94 (92)**

Ամուսնացող տղամարդկանց միջին տարիքը կազմում է **28.0** տարին, իսկ կանանցը՝ **23.2** տարին:

Կատարվել է թվով **227 (168)** ամուսնալուծության ակտային գրանցում, որոնցից **109**-ը՝ համատեղ դիմումի հիման վրա, **117**-ը՝ դատարանի վճռի հիման վրա և **1**-ը՝ ամուսիններից մեկի դիմումի հիման վրա:

Ամուսնալուծվողների միջին տարիքը կազմում է **33.6** տարին: Ամուսնալուծության գրանցման համար ավելի հաճախ դիմում են կանայք: Ամուսնալուծվող քաղաքացիներից **153** զույգ ունի անչափահաս երեխա:

Կատարվել է ԱՀ քաղաքացիների թվով **2 (3)** որդեգրման ակտի գրանցում՝ դատարանի վճռի հիման վրա:

2017թ. կատարված ակտային գրանցումներից **134**-ը՝ (**147**) վերաբերում է հայրության հաստատմանը, **42**-ը՝ անվան, հայրանվան, ազգանվան փոխմանը (**55**), **101**-ը՝ ուղղմանը (**76**) և **35**-ը՝ ակտային գրանցումների վերականգնմանը (**15**):

**Քաղաքացիական կացության ակտերի գրանցումն ըստ ՔԿԱԳ տարածքային
բաժինների բնութագրվում է հետևյալ կերպ.**

ՔԿԱԳ բաժնի անվանումը	ծնունդ	մահ	ամուսնություն	ամուսնալուծություն	որդեգրում	հայրության ճանաչում	ուղղում	ա.ա.հ փոխում	ակտի վերականգնում	տեղեկանք	կրկնորինակ	ծանուցում	այլ վայրից ստ. տեղ. և փոխում	պետություն
Ստեփանակե րտ	988	440	378	117	1	38	2	2 3	17	341	574	1	1	2.939
Ասկերան	252	146	96	19	-	23	5	2	15	93	92	3	-	746
Մարտակեր տ	321	189	145	19	-	34	-	2	23	164	271	2	1	1171
Մարտունի	307	256	134	24	-	5	5	2	8	172	119	1	1	1.034
Հաղրութ	179	121	88	21	-	8	6	5	33	45	81	1	1	589
Շուշի	86	32	34	11	-	4	1	-	1	26	24	-	-	219
Շահումյան	50	7	28	2	-	9	1	3	-	5	7	1	2	115
Քաշաթաղ	168	47	59	14	1	13	1	-	4	49	34	17	15	422
Ընդամենը	2.351	1.23 8	961	227	2	134	4	3 2	101	895	1.20 2	26	21	7.235

Ինչպես երևում է աղյուսակից, ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնի վրա է ընկնում գործերի **40.6%**, ՔԿԱԳ Ասկերանի տարածքային բաժնի վրա՝ **10.3%**, ՔԿԱԳ Մարտակերտի տարածքային բաժնի վրա՝ **16.2%**, ՔԿԱԳ Մարտունու տարածքային բաժնի վրա՝ **14.3%**, ՔԿԱԳ Հաղրութի տարածքային բաժնի վրա՝ **8,2 %**, ՔԿԱԳ Շուշիի տարածքային բաժնի վրա՝ **3.0%**, ՔԿԱԳ Շահումյանի տարածքային բաժնի վրա՝ **1.6%** և ՔԿԱԳ Քաշաթաղի տարածքային բաժնի վրա՝ **5.8 %** ծանրաբեռնվածություն:

ՔԿԱԳ հանրապետական արխիվի կողմից 2017թ. ընթացքավորվել է **1.096** գրություն, որից **638**-ը էլեկտրոնային կառավարման նոր ծրագրով: Բացի դրանից, նշված ժամանակաշրջանում էլեկտրոնային կառավարման նոր ծրագրում թվայնացվել է **5.228** ամուսնության ակտային գրանցում: Անհրաժեշտ է նշել, որ թվայնացումը կատարվում է ՔԿԱԳ Ստեփանակերտի տարածքային բաժնի կողմից կազմված 2002թ.-ից մինչև 2013թ. և ՔԿԱԳ Մարտակերտի տարածքային բաժնի 1996, 1997, 1998 և 1999թթ. ամուսնության ակտային գրանցումները:

ՔԿԱԳ հանրապետական արխիվի համակարգմանն ու պահպանությանն են հանձնվել ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից գրանցված **5.040** ակտային գրանցումների երկրորդ օրինակները:

Այսպիսով, 2017թ. ՔԿԱԳ տարածքային բաժինների կողմից հոգուտ պետական բյուջեի գանձվել է **8.307.000** դրամ (**6.911.000**):

Նոտարական գործունեության կազմակերպում.

Առօրյա մեթոդական և կազմակերպչական ղեկավարման է ենթարկվել նաև նոտարիատի գործունեությունը: Կատարվել է ստացված դատական ակտերի ուսումնասիրություն և հաշվառում:

Կազմակերպվել է նոտարական վիճակագրության ամփոփում և պրակտիկայի ուսումնասիրություն, ԱՀ պետական նոտարների կողմից հաստատված կտակների երկրորդ օրինակների հաշվառում և պահպանում:

ԱՀ նոտարական գրասենյակների կողմից 2017թ. կատարվել են **18.491 (13.981)** նոտարական գործողություններ, որոնց դիմաց գանձվել է **21.220.300 (16.077.300)** դրամ պետական տուրք:

Կատարված նոտարական գործողությունների ընդհանուր թվից **7.143**-ը բաժին է ընկել Ստեփանակերտի թիվ **1 (5.498)**, **5.622**-ը՝ Ստեփանակերտի թիվ **2 (4.061)**, **1.704**-ը՝ Ասկերանի (**1.280**), **565**-ը՝ Մարտակերտի (**412**), **1.447**-ը՝ Մարտունու (**1.139**), **1.002**-ը՝ Հաղրութի (**747**), **564**-ը՝ Շուշիի (**447**), **367**-ը՝ Քաշաթաղի (**342**) և **77**-ը՝ Շահումյանի (**55**) նոտարական գրասենյակներին: Այսինքն, հաշվետու ժամանակաշրջանում 2016թ. համեմատությամբ նոտարական գործողությունների քանակը աճել է **4.510**-ով, իսկ պետական տուրքը աճել է **5.143.000** դրամով:

2017թ. ԱՀ նոտարական գրասենյակները կատարել են հետևյալ նոտարական գործողությունները.

կտակների հաստատում	168 (140)
պայմանագրերի վավերացում	3379 (2.654)
այդ թվում՝	
անշարժ գույքի օտարման պայմանագրերի վավերացում	1659 (1.249)
անշարժ գույքի վարձակալության պայմանագրերի վավերացում	163 (185)
անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրերի վավերացում	31 (19)
գրավի պայմանագրերի վավերացում	807 (522)
շարժական գույքի վերաբերյալ պայմանագրերի վավերացում	14 (19)
այլ պայմանագրերի վավերացում	705 (440)
տրվել են սեփականության իրավունքի վկայագրեր	97 (76)
տրվել են ժառանգության իրավունքի վկայագրեր	688 (553)
լիազորագրերի հաստատում	2.816 (2.664)
փաստաթղթերի պատճենների կամ դրանց քաղվածքների իսկության հաստատում	4170 (1.566)
փաստաթղթերի թարգմանության իսկության վավերացում	2.080 (2.176)
այլ նոտարական գործողություններ	5.093 (4.372)

Վիճակագրական տվյալների ուսումնասիրությունից երևում է, որ Ստեփանակերտի թիվ **1** նոտարական գրասենյակի վրա է ընկնում գործերի ծանրաբեռնվածության **38.6%**-ը, Ստեփանակերտի թիվ **2** նոտարական գրասենյակի վրա՝ **30.4%**-ը, Ասկերանի նոտարական գրասենյակի վրա՝ **9.2%**-ը, Մարտակերտի նոտարական գրասենյակի վրա՝ **3.1** %-ը, Մարտունու նոտարական գրասենյակի վրա՝ **7.8%**-ը, Հաղրութի նոտարական գրասենյակի

վրա՝ **5.4%**-ը, Շուշիի նոտարական գրասենյակի վրա՝ **3.1%**-ը, Քաշաթաղի նոտարական գրասենյակի վրա՝ **2%**-ը և Շահումյանի նոտարական գրասենյակի վրա՝ **0.4%**-ը:

Այսպիսով, 2017թ.-ին ՔԿԱԳ և նոտարիատի գործակալության կողմից հոգուս պետական բյուջեի գանձվել է **29.726.300** դրամ (**23.317.300** դրամ) պետական տուրք, այդ թվում՝

- ✓ նոտարական գրասենյակների կողմից - **9.152.500** դրամ,
- ✓ ՔԿԱԳ տարածքային բաժինների և գործակալության կենտրոնական մարմնի կողմից - **2.608.600** դրամ,

7. Պետական ռեգիստրի գործունեության կազմակերպում

Արդյունքները: ԱՀ Նախագահի 2017-2020թթ. ծրագրից բխող միջոցառումների կատարման շրջանակներում իրականացվել են նախկինում գրանցված (հաշվառված) **135** սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունների՝ էլեկտրոնային եղանակով e-register.am կայքում տեղադրման աշխատանքներ: Նույն ծրագրից բխող, արդարադատության նախարարության համակարգում իրականացվելիք միջոցառումների կատարման ժամանակացույցին համապատասխան 2017թ. IV եռամսյակում գործակալության աշխատողները՝ փորձի փոխանակման, ինչպես նաև e-register.am էլեկտրոնային համակարգում իրականացվող աշխատանքների ընդարձակման և գործնականում դրա կիրառման հետ կապված խնդիրների լուծման նպատակով գործուղվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալություն:

Սիստեմատիկ հսկողություն է իրականացվել պետական ռեգիստրի տարածքային բաժինների նկատմամբ, նրանց տրվել են ոլորտը կարգավորող օրենսդրության պարզաբանումներ և մեթոդական ցուցումներ: Կազմակերպվել են նաև քաղաքացիների ընդունելություններ, նրանց բազմաթիվ հարցերին տրվել սպառիչ պատասխաններ:

Հաշվետու ժամանակահատվածում պետական գրանցման են ենթարկվել **172** առևտրային (**99**) և **25** ոչ առևտրային տիպի (**27**) իրավաբանական անձ, **311**-ի հիմնադիր փաստաթղթերի փոփոխությունները սահմանված կարգով գրանցվել են (ստացել են ընթացիկ գրանցում) (**306**), իսկ **14**-ի գործունեությունը՝ դադարեցվել (**8**):

Սահմանված կարգով պետական հաշվառման են վերցվել **1** հիմնարկ, **1** հիմնարկի առանձնացված ստորաբաժանում և **2** իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում (**2**), **21** հիմնարկ (**7**) և **16** իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում (**3**)՝ ենթարկվել են ընթացիկ պետական հաշվառման, իսկ **4** իրավաբանական անձի առանձնացված ստորաբաժանում՝ հաշվառումից հանվել:

Պետական հաշվառման են ենթարկվել նաև **959** անհատ ձեռնարկատեր (**650**), **126**-ը՝ ստացել ընթացիկ պետական հաշվառում (**101**), իսկ **33**-ի գործունեությունը՝ դադարեցվել (**31**):

Պետական միասնական գրանցամատյանից տրվել են **534** տեղեկանքներ (**426**):

Վերոգրյալ գրանցումների դիմաց գանձվել է **8.823.000** դրամ պետական տուրք (**6.418.500**):

Հաշվետու ժամանակահատվածում գանձվել է հատուկ թույլտվություն պահանջող ֆիրմային անվանումների օգտագործմամբ պայմանավորված **10 200 000** դրամ պետական տուրք (**9 600 000**) և **2** իրավաբանական անձանց տարեկան պետական տուրքի պարտավորության ժամանակին չկատարմամբ պայմանավորված **23 800** դրամ

հաշվարկված տույժ (552 200), որի հաշվակցմամբ հաշվետու ժամանակահատվածում գանձվել է **19 046 800** դրամ պետական տուրք (16 570 700):

Գործակալության կենտրոնական մարմնի և տարածքային բաժինների կողմից մատուցած վճարովի ծառայությունների արդյունքում արտաբյուջե է մտցվել **1.299.000** դրամ (959.000)

8. Դատական ակտերի հարկադիր կատարման ոլորտ

Արդյունքները: 2017 թվականին ԴԱՀԿԱ ծառայության աշխատակիցների կողմից հարուցվել են **7755 (5410)** կատարողական վարույթներ՝ նախորդ տարուց մնացած **1514-ի (1521)** հետ կազմելով **9269 (6931)**: Նշված կատարողական վարույթներից փաստացի կատարման հիմքով կարճվել են **3567-ը (2253)**, ավարտվել՝ **3579-ը (3164)**: Անավարտ կատարողական վարույթների մնացորդը կազմում է **2123 (1514)**:

2016 թվականին դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության կողմից փաստական գանձման է ենթարկվել **1.000.538.277,7 (1.017.476.023)** դրամ, այդ թվում պետության օգտին՝ **63.397.184 (68.238.733)** դրամ, ֆիզիկական անձանց օգտին՝ **61.756.799 (87.760.232)** դրամ, իրավաբանական անձանց օգտին՝ **875.384.294.7 (861.477.058)** դրամ:

Չբռնագանձված գումարի չափը կազմում է **1.735.756.714.1 (1.936.587.067)** դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում ծառայության կողմից հայտարարվել են արգելադրված գույքի ամենամսյա հարկադիր աճուրդ-վաճառքներ, որոնց իրացումից ստացված գումարներն ուղղվել են պահանջատերերի պարտքերի մարմանը:

9. Դատական փորձաքննությունների լաբորատորիա

Արդյունքները: 2017թ. փորձաքննությունների կատարման համար Լաբորատորիայում գրանցվել է թվով **511** մուտքեր, այդ թվում ներառված են նախորդ տարվանից փոխանցված մուտքերը: Նշված մուտքերից **95-ի** կատարումը փոխանցվել է 2018թ., իսկ նախորդ տարվանից փոխանցված մուտքերի թիվը կազմել էր **113**:

2016թ. համեմատությամբ 2017թ-ին մուտքերի թիվը նվազել է **387-ով** կամ **57** տոկոսով, իսկ ավարտված մուտքերը քանակապես նվազել է **375-ով** կամ **50** տոկոսով: Նշված նվազումը չի կարելի դիտել որպես բնականոն նվազում, քանի որ համեմատ 2014 և 2015 թվականների մուտքերը աճել է համապատասխանաբար **10.4** և **4.7** տոկոսներով, իսկ ավարտվածները **8** և **9.6** տոկոսներով, սակայն 2016 թվականի աննախադեպ աճը պայմանավորված էր նշված տարվա ապրիլյան դեպքերի հետ:

Այսպիսով, հաշվետու ժամանակահատվածում Լաբորատորիայում գրանցված **511** մուտքերից կատարմամբ ավարտվել և նախաձեռնողներին է հանձնվել **377-ը**, ըստ տեսակների **419** փորձաքննություն, 2016թ. համեմատ կատարված փորձաքննությունների քանակը, ըստ տեսակների նվազել է **170** տոկոսով, որը նույնպես պայմանավորված է վերը նշված պատճառով:

Ըստ նախաձեռնողների մուտքերի բաշխվածության պատկերը հետևյալն է՝

1. ԱՀ ոստիկանություն – **176**,
2. ԱՀ դատախազություն – **7**,
3. ԱՀ դատարաններ - **112**,

4. ԱՀ ՖՆ ՔԲ – 1,
5. ԱՀ ԱՆ ԴԱՀԿԾ – 87,
6. ԱՀ ԿԱ ԱԻՊԾ – 105,
7. ԱՀ ԿԱ ԱԱԾ – 5,
8. Այլ մուտքեր - 18:

Նշված մուտքերից, առանց կատարման, նախաձեռնողներին հետ են վերադարձվել **39-ը (43):**

Հանձնաժողովային և համալիր կարգով կատարվել են **2 (4)** և **42 (378)**, իսկ միանձնյա՝ **333 (370)** փորձաքննություններ:

Փորձագետները հարցաքննության և դատական նիստերին մասնակցել են **22 (23)** անգամ:

Դատական փորձաքննությունների լաբորատորիայի փորձագետները ուսումնասիրել են **918 (3465)** օբյեկտներ:

Դատաքննչական պրակտիկայում փորձաքննության առջև դրվող խնդիրների լուծման հաջողությունը մեծապես կախված է փորձագետի մասնագիտական պատրաստվածության մակարդակից, փորձագիտական հետազոտության տվյալ բնագավառում կիրառվող ժամանակակից մեթոդներին ու սարքավորումներին տիրապետելու և պրակտիկ աշխատանքում դրանք կիրառելու նրա հմտությունից:

Լաբորատորիայում առանձնակի ուշադրություն է դարձվում դատական փորձաքննության տարբեր մասնագիտություններով նոր կադրերի պատրաստման և վերապատրաստման գործընթացին: Նշենք, որ ներկայումս լաբորատորիայի դատական փորձագետի պատրաստումը իրականացվում է ստաժավորման ձևով՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության փորձագիտական կենտրոնում: 2017 թվականի սկզբից ստաժավորման մեջ է գտնվում թվով երկու փորձագետներ՝ շինարարատեխնիկական և ապրանքագիտական փորձագիտական մասնագիտություններով, որոնք սույն թվականի սկզբներին կստանան համապատասխան որակավորումներ:

Ներկայումս Լաբորատորիայում իրականացվում է **10** տեսակի փորձաքննություններ (հրդեհատեխնիկական, կենսաբանական, շինարարատեխնիկական, տնտեսագիտական, փաստաթղթաբանական, էլեկտրատեխնիկական, ապրանքագիտական, ձգաբանական, ֆիզիկոքիմիական (նյութագիտական) հետազոտություն, ավտոտեխնիկական, համալիր) :

10. Արցախի Հանրապետության պետական արխիվ

Արդյունքները: 2017 թվականին Արցախի Հանրապետության պետական արխիվի կողմից հիմնարկ-ձեռնարկություններից և կազմակերպություններից ընդունվել է մշտական պահպանման **2444 (4266)** անձնական կազմի **839 (1052)**, ժամանակավոր **766 (409)**, երկարաժամկետ **992 (527)** գործ:

ԱՀ քաղաքացիներից ընդունվել է սոցիալ-իրավական բնույթի **1276 (1128)** դիմում և տրվել են համապատասխան արխիվային տեղեկանքներ: Իրականացվել է **453 (254)** հարցում: Թվայնացվել է **54.353 (72.032)** թերթ և **13.254** ֆայլ: Կազմավերականգնողական լաբորատորիայում վերականգնվել և վերանորոգվել է **2515 (2446)**, կարվել է **3012 (7833)** և կազմապատվել է **294 (364)** գործ:

Ցուցակագրվել է մշտական պահպանության **625**, անձնակազմին վերաբերվող՝ **1969**, ոչնչացման համար առանձնացվել է **2725** գործ: Մեթոդիկ և պրակտիկ օգնություն է

ցուցաբերվել գերատեսչական արխիվներին՝ արխիվային փաստաթղթերի պահպանման պայմանների հետագա բարելավման և ապահովման նպատակով: Հիմնարկի գործավարական բազմաթիվ ու բազմաբովանդակ փաստաթղթերը ճշտորեն խմբավորելու և փաստաթղթերի հետ տարվող աշխատանքները ճիշտ կազմակերպելու նպատակով մշակվել է գործերի անվանացանկ: Անց է կացվել փորձագիտական հանձնաժողովի 5 (4) նիստ, որտեղ քննարկվել և հաստատվել է 141 (150) ցուցակ՝ 8428 (16242) պահպանվող միավորների ընդհանուր քանակով:

2017 թվականին հիմնարկ-ձեռնարկությունների հետ կնքվել է 33 պայմանագիր (32) փորձաքննությամբ արժեքավորելու համար:

Արցախի Հանրապետության պետական արխիվի աշխատակիցները գործուղվել են ք.Երևան՝ ՀՀ Ազգային արխիվ՝ «Եվրասիկա» համաժողովին մասնակցելու համար:

Հաշվետու տարում բարելավվել են պետական արխիվի շենքային պայմանները՝ տեղադրվել են նոր պատուհաններ: Աշխատանքները կկրեն շարունակական բնույթ:

11. Մարմնի վարչատնտեսական գործունեությունը բնութագրող ցուցանիշները

Հաշվետու ժամանակաշրջանում նախարարության աշխատակազմում հաստատված հաստիքների քանակը կազմել է 111 (109), որոնցից 53 (51)-ը քաղծառայության պաշտոնների, 1-ը՝ քաղաքական, 2-ը՝ հայեցողական, 9-ը՝ նոտարների, 27-ը՝ (27) ԴԱՀԿԱ ծառայության, 19 (19)-ը տեխնիկական սպասարկումն իրականացողների հաստիքներ են:

Նախարարության 2017 թվականի հաստատված և ճշտված բյուջեն կազմել է 337.261.500 (335.366.100) դրամ: Աշխատավարձի վարձատրության հաստատված և ճշտված բյուջեն կազմել է 285.164.300 (281.654.700) դրամ, իսկ փաստացի ծախսը՝ 281.782.463 (279.822.102) դրամ:

Վարչական սարքավորումների հաստատված բյուջեն կազմել է 1.000.000 (1.000.000) դրամ, ճշտվածը և փաստացին կազմել է 2.154.1000 դրամ:

2017 թվականին նախարարությանը պատկանող ավտոմեքենաների քանակը 8-ն է:

Հաշվետու տարում նախարարության ստորաբաժանումների կողմից 2017 թվականին հոգուտ պետական բյուջեի գանձվել է 112.672.284 (108.805.255) դրամ գումար:

Նախարարության ստորաբաժանումների կողմից 2017 թվականին հոգուտ պետական արտաբյուջե է մտցվել 13.060.100 դրամ գումար:

12. 2018 թվականին նախատեսվող միջոցառումների համառոտ նկարագիրը

2018 թվականին Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության գործունեության համար ուղենիշ է հանդիսանալու Արցախի Սահմանադրությունը, Արցախի Հանրապետության Նախագահի 2017-2020 թթ. ծրագրի դրույթները:

Աշխատանքներ են իրականացվելու օրենսդրության ստեղծման, կատարելագործման, առկա բացերի լրացման և գործող օրենքները Արցախի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանեցնելու գործընթացը շարունակելու ուղղությամբ: Իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման ոլորտում կներդրվեն բոլոր միջոցները՝ ընթացիկ օրենսդրության մեջ արտացոլելու միջոցով կենսագործելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և պետական կառավարմանը վերաբերող Սահմանադրությամբ ամրագրված դրույթները:

Գործուն և համակարգային բնույթ կկրեն համակարգի ստորաբաժանումների գործունեության նկատմամբ տարվող հսկողությունը, դրա կազմակերպչական և մեթոդական

կառավարումը, պրակտիկ օգնության ցուցաբերումն ու ստուգումների իրականացումը, վերահսված թերությունների և բացթողումների քննարկումն ու դրանց վերացման համար համապատասխան միջոցների կիրառումը:

Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից կշարունակվի հասարակության իրավագիտակցության բարձրացմանը, քաղաքացիական հասարակության ձևավորմանը, քաղաքացիների՝ իրենց իրավունքների մասին իրազեկվածության մակարդակի բարձրացմանն ուղղված հետևողական միջոցառումների իրականացումը:

Միջոցներ կձեռնարկվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավական տեղեկատվական «Arlexis» համակարգի զարգացման ուղղությամբ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության և «Պաշտոնական տեղեկագիր» փակ բաժնետիրական ընկերության հետ համագործակցության շնորհիվ նախատեսվում է համակարգում իրականացնել ծրագրային և տեխնիկական ապահովման այլ աշխատանքներ:

ԱՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման արդյունավետության բարձրացան նպատակով նախատեսվում է ընդլայնել Էլեկտրոնային եղանակով հարցումների կատարման շրջանակը:

Նախարարության խնդիրներից մեկը բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի շարունակական բարձրացումն է, հետևաբար, շարունակվելու են աշխատանքները՝ նոտարիատի, քաղաքացիական կացության ակտերի և իրավաբանական անձանց պետական գրանցման ոլորտներում վարչարարության արդյունավետության բարձրացմանը, ժամկետների կրճատմանը և քաղաքացիների սպասարկման համար առավել բարենպաստ պայմանների ստեղծմանը, ինչը կնպաստի բյուրոկրատական քաշքշուկները և քաղաքացիների համար առավել անհարմարություն ստեղծող գործառույթների վերացմանը:

2018թ. նախատեսվում է շարունակել ՔԿԱԳ արխիվի թվայնացման աշխատանքները, ինչը կնպաստի քաղաքացիական կացության ակտերի գրանցման ոլորտում վարչարարության արդյունավետության բարձրացմանը:

Շարունակվելու են նախարարության ստորաբաժանումներում նոր տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և գործառույթների ավտոմատացման գործընթացները:

Շարունակվելու են պետական ռեգիստրում ներդրված Էլեկտրոնային համակարգի հետ կապված աշխատանքները, որը կնպաստի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

Նշված կայքում տեղադրվում են նաև նախկինում գրանցված /հաշվառված/ սուբյեկտների վերաբերյալ ամբողջական տեղեկությունները, ինչը նախատեսվում է ավարտել 2018 թվականի տարեվերջին:

2018 թվականի ընթացքում նախատեսվում է մշակել «Անձնական տվյալների պաշտպանության մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Երեխայի իրավունքների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Հավաքների ազատության մասին», «Տեղեկատվության ազատության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքների նախագծերը:

Մնանկության ոլորտում նախատեսվում է իրականացնել օրենսդրական փոփոխություններ՝ խթաններ ստեղծելով սնանկության վարույթում կազմակերպությունների առողջացմանը և դրա համար գործուն միջոցներ ձեռնարկել՝ որպես գերակայություն սահմանելու ուղղությամբ, ինչպես նաև կատարելագործել սնանկության կառավարիչների որակավորման քննությունների անցկացման կարգը:

Շարունակվելու է համագործակցությունը ոչ կառավարական կազմակերպությունների հետ՝ համապետական խնդիրների լուծման գործում նրանց ներգրավելու նպատակով: Հասարակական միավորումների և զանգվածային լրատվության միջոցների գործունեության օրինականության նկատմամբ վերահսկողության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով մշակվելու են նոր մեխանիզմներ:

Շարունակվելու է ակտիվ համագործակցությունը ՀՀ արդարադատության նախարարության, ՀՀ փաստաբանների պալատի, ՀՀ փաստաբանական դպրոցի և ՀՀ արդարադատության ակադեմիայի հետ:

Միջոցներ են ձեռնարկվելու նաև այլ երկրների արդարադատության մարմինների հետ կապերի և փոխհարաբերությունների հաստատման ուղղությամբ:

Ծանոթություն. փակագծերում նշված են 2016 թվականի տվյալները.

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ